



**ՄԻՋԿԻՍԱԳՆՌԱՅԻՆ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԱՆՀԱՄԱՉԱՓՈՒԹՅԱՆ
ՀՈԳԵՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Սեկոյան Ի. Է.

ՀՀ, Երևանի Մ. Հերացու անվ. պետական բժշկական համալսարան
ՀՀ ԱՆ ֆիզիկական բժշկության և կուրորտաբանության ԳՀԻ

Ամփոփում

Մեր հետազոտության նպատակն է ուսումնասիրել թաքնված ձախիկության և էմոցիոնալ-անձնական ոլորտի զուգորդման հատկանիշները, զուգակցված նրանց տարիքային և գենդերային փոփոխությունների ձևափոխության վերլուծությամբ:

Նախագծում ներգրավվել են 408 ռեսպոնդենտներ. 157 տղամարդ (38,5%) և 251 կին (61,5%), ըստ տարիքային հատկանիշների բաժանված երեք խմբի. I-234 ռեսպոնդենտներ, միջին տարիք (M±SD) 22,7±2,8 տարիք, II-81 ռեսպոնդենտներ (38,7±6,2), III - 93 ռեսպոնդենտներ (57,4±4,4):

Հոգեչափական հետազոտությունն անց է կացվել միօրինակային թեստերի օգնությամբ: Թաքնված ձախիկության հատկանիշներ են հայտնաբերվել 82,4 % ռեսպոնդենտների մոտ: Մեկ հատկանիշով մարդկանց թիվը կազմում է 26,0 %, երկուսով՝ 30,4%, երեքով՝ 14,0 %, չորսով՝ 12,0 %: Ընդհանուր ընտրության մեջ գենդերային կտրվածքով կապված մարդկանց տարիքի հետ հայտնաբերվել է աճի մեծացման տեմպին՝ ինչպես առանց հատկանիշների թաքնված ձախիկության, այնպես էլ տարիքի հետ միասին մեկ հատկանիշով ձախիկության մարդկանց թվի աճի միտում: Նկատվում է թաքնված ձախիկության երկու և ավելի հատկանիշներով ռեսպոնդենտների թվի նվազման աճ: Ընդհանուր ընտրությամբ ըստ անկեղծության փորձության թեստի՝ Eysenck Personality Inventory (EPI-1 սանդղակ), հաղթահարել են 78,6% ռեսպոնդենտներ, մնացած 87 անձիք հետագա հետազոտություններից հեռացվել են: Ըստ թեստավորման արդյունքների (EPI-2) ինտրովերտների թիվը տարիքի հետ զգալի աճում է, իսկ էքստրավերտների թիվը՝ նվազում, ընդ որում, էմոցիոնալ կայունությունը (EPI-3) տարիքային և գենդերային կտրվածքով գրեթե չի փոփոխվում: Տարիքի հետ նկատվում է խղիթիկների թվի նվազում, ֆլեգմատիկների և մելանխոլիկների թվի աճ, միաժամանակ տղամարդկանց մոտ սանգվինիկների թիվը տարիքի հետ չի փոփոխվում, իսկ կանանց մոտ՝ կտրուկ նվազում: Ռեսպոնդենտների հետազոտության արդյունքում Rotter թեստի օգնությամբ, նկատվել է տարիքի հետ էքստերնալ տեսակի անձանց թվի աճ և ինտերնալ տիպի անձանց նվազում:

Չուգակցված եռյակ՝ ալեքսիտիմիա (ըստ Toronto Alexithymia Scale) <=> տագնապ (ըստ Staite-Trait Anxiety Inventory) <=> ընկճվածություն (ըստ Beck Depression Inventory) դեպքերի տոկոսային մեծամասնությունում հայտնաբերվել են ինտրովերտների և էքստերնալների մոտ: Բազմաթիվ գծային ռեգրեսիայի մոդելի օգնությամբ, ոչ պարամետրական չափանիշներով Spearman, kendall, ինչպես նաև կլաստերային և ֆակտորային վերլուծմամբ հայտնաբերվել է, որ դրական կորելացիոն կապը և զուգակցված բնավորության ուսումնասիրվող հոգեչափական ցուցանիշները, ռեսպոնդենտների մոտ, տարիքի հետ ենթարկվում են որոշակի ձևափոխության: Այսպիսով, հայտնաբերվել է, որ տարիքային դինամիկայում շարժողական կիսագնդային անհամաչափության աճի հետ մեկտեղ կատարվում է ինքնատիպ էմոցիոնալ-անձնական հատկանիշների ձևափոխում, ինչը կարելի է դիտարկել որպես ուղեղի լատերալիզացիայի ձախակողմյան հատկանիշներից մեկը:

Հանգուցային բառեր. հոգեֆիզիոլոգիա, միջկիսագնդային անհամաչափություն, հոգեչափություն, անձնային-հուզական ոլորտ, ալեքսիտիմիա, տագնապ, ճնշվածություն: